ՎԱՂԻՐ ԻՄ ՁԻ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Վաղիր, իմ ձի, այդպէս թրռիր եռանդով.
Ինձ տար, հասցրու կրուի դաշտըն ինձ շուտով.
Եղբայրներըս կարօտ են մեր օգնութեան,
Շուտով, իմ ձի, շուտով վաղիր ժրաջան։
Մի վրհատիր, մենք հեռացանք ամբոխից,
Փուչ ամբոխի անմիտ և լիրբ ծաղրանքից.
Տիրոջդ համար թող ոտներդդ ամրանան.
Շուտով, իմ ձի, շուտով վաղիր ժրաջան։
Ձի, մի վախիլ թէ կան խորշեր առաջիդ.
Ա՛խ, քեզ հալալ բոլոր կերած քո գարիդ.
Թրռիր, անցիր այս դաշտերըն անսահման.
Շուտով, իմ ձի, շուտով վաղիր ժրաջան։
Ձի, լսում են արդէն աղմուկ, աղաղակ.
Ես լուսնի պէս տեսնում եմ մեր Նրպատակ.
Ձի, շուտ արա, ձի, ոտներիդ ես դուրբան.
Ձի, քիչ մընաց, շուտով հասիր ժրաջան։

Մոսկվա. 1889 թ. յունվարի 8.

4/13